

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎՐԱՑ ԴԱՎԻԹ ԱՐՔԱՅԱԶՆԻ ԷՐԶՐՈՒՄԻ ԲԱԹԹԱԼ ՀՈՒՍԵՅՆ ՓԱՇԱՅԻՆ ԳՐԱԾ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՆԱՄԱԿԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկաս Կարնեցու մահվանից հետո (1799 թ. դեկտեմբերի 27) Էջմիածնում կաթողիկոսական թեկնածուների ընտրության շուրջ առաջացած շփոթը հայտնի է Դավիթ-Դանիելյան վեճ անվամբ: Մի վեճ, որի համար երկու կողմերն էլ գործել են ապշեցուցիչ եռանդով՝ վատնելով մեծ ժամանակ և դրամական զգալի միջոցներ:

Վերը նշված փաստը հաստատելու համար՝ բազմաթիվ օրինակներից բերենք միայն մեկը: Կաթողիկոսական թեկնածու Դավիթ Ղորղանյանի հավատարմատար Դավիթ քահանա Տեր-Օհանյանը մի գրությամբ տեղեկացնում է իր պաշտպանյալին, որ ինքը լավ է աշխատում և միջոցներ չի խնայում, ու խորհուրդ է տալիս Դավիթ արքեպիսկոպոսին, որ գործը գլուխ բերելու համար փող չխնայի[1]:

Կաթողիկոսական թեկնածուների հանախոհները ջանք չէին խնայում որոր հայաբնակ վայրերը հեղեղելու իրենց թղթերով, մասնավոր ու պաշտոնական գրագրություններով, իշխանություն ունեցող անձերին (թե հայ և թե օտար), նույնիսկ սուլթանին, շահերին, կայսրերին իրենց կողմը գրավելու համար: Երևանում, Կ. Պոլսում, Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում և այլուր գործել են հարյուրավոր մարդիկ: Այս համար ու կատաղի պայքարից հսկայական քանակությամբ գրավոր նյութեր են մնացել, որոնցով ողողված է Մատենադարանի կաթողիկոսական դիվանը:

Ղուկաս Կարնեցին, իր հայրապետության օրոք վարում էր չափավոր քաղաքականություն: Նա ազատագրական ձգտումների նկատմամբ իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու նման զգուշավոր վերաբերմունք ուներ, և հակառակ դրան ինքը ևս ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու

[1] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 45;



օտար լծից, սակայն միևնույն ժամանակ ծանր հետևանքներից զերծ մնալու համար՝ աշխատում էր չբացահայտել իր նպատակները իրանական տիրապետող շրջանների մոտ: Այդ իսկ պատճառով, նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ, Էջմիածնի միաբանները հաշվի առնելով Ղուկաս Կարնեցու վարած քաղաքականությունը և դեպքերի հետագա անկանխատեսելի զարգացումից խուսափելու համար՝ Հովսեփ Արղությանի անունը չմտցրին թեկնածուների ցանկի մեջ, այլ՝ կանգ առան Կ. Պոլսի պատրիարք Դանիելի վրա[2]:

Դա բացատրվում է նրանով, որ Հովսեփ Արղությանը, լինելով Ռուսաստանի հայոց առաջնորդը, հանդես էր գալիս որպես ռուսական պետության պաշտոնյա: Նա տարիներ շարունակ ռուսական պաշտոնական շրջաններում էր ապրել, և շատ անգամ ռուսաց զորքերի հետ պատերազմի էր գնացել օսմանցիների և պարսիկների դեմ: Ուստի և նրա ներկայությունը Էջմիածնում, այն էլ որպես կաթողիկոս, անհանդուրժելի կլիներ թե Թուրքիայի և թե Իրանի համար: Դա հավասարազոր էր երկու տիրապետող տերությունների դեմ պատերազմ հայտարարելուն[3]:

Այդ հանգամանքը չէր մտահոգում Հովսեփ արքեպիսկոպոսին: Նա մեծ եռանդով գործի է անցնում և դիմելով Ռուսաստանում գտնվող իր բարեկամներին՝ կարողանում է ձեռք բերել ռուսաց կայսեր հրովարտակը[4], և ապա հենց Ռուսաստանի օգնությամբ՝ սուլթանական բերաթը[5] ամենայն հայոց կաթողիկոս դառնալու համար:

Նա մեծ հանդիսավորությամբ ճանապարհ է ընկնում Թիֆլիս, որտեղ նրան Մայր Աթոռ ուղեկցելու համար՝ Էջմիածնից դիմավորելու էին եկել չորս եպիսկոպոսներ[6]:

1891 թ. փետրվարի 11-ին Արղությանն արդեն Թիֆլիսում էր: Այնուհանդերձ, Դանիելը, որը մինչ այդ ստացել էր Էջմիածնի հրավերը, ուղևորվում է դեպի Մայր Աթոռ՝ օծվելու որպես ամենայն հայոց կաթողիկոս: Սակայն էջմիածնական գործերին ռուսաց գործուն միջամտության պատճառով՝ Դանիելը աքսորվում է Եվդոկիա[7]: Մեկ ամիս անց՝ մարտի 10-ին, Թիֆլիսում մահանում է Հովսեփ Արղությանը:

Արղությանը մահվանից առաջ չհաստատեց որևէ կտակ կազմել, սակայն Էջմիածնից ժամանած հրավիրակ Սիմեոն եպիսկոպոսին կարողացավ հայտնել. «իմ կայից դատարկվն Գրիգոր վարդապետն գիտակ է, ի նմանէ տեղեկացէք»[8]:

Հովսեփի անձնվեր հետևորդներից էր Գրիգոր Աղքիրմանցի վարդապետը՝ նրա աշակերտն ու հավատարիմ անձը: Սիմեոն եպիսկոպոսը, որը եղել է Հովսեփ կաթողիկոսի խոստովանահայրը, մի գրությամբ տեղեկացնում է, որ կաթողիկոսը կտակել է ինչ-որ մի արկղ հանձնել եղբորորդուն՝ իշխան Սողոմոնին. «իսկ յայլ ամենայն կային իմ սուրբ Աթոռոյն»[9]: Հով-

---

[2] **Աբր. Զամինյան**, Հայոց եկեղեցու պատմութիւն, Բ մասն, 1909:
[3] **Գեղամյանց**, Պատմական քաղվածքներ, էջ 10:
[4] Акты (акак), т. II, стр. 1150—1151.
[5] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 Գ վավ. 558:
[6] **Մ. Օրմանյան**, Ազգապատում, Բ հ., Գ գիրք, էջ 3256:
[7] **Հովհաննիսյան Կ.**, Արևելյան Հայաստանի ազատագրական-շարժման պատմությունից, Երևան, 1981, էջ 9:
[8] **Մ. Օրմանյան**, Ազգապատում, գիրք Գ, Բ հատոր, էջ 3279:
[9] **Գ. Աղանյան**, Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 96;

սեփ Արղությանը կտակել է նաև իր մարմինը թաղել Սիմեոն կաթողիկոսի մոտ՝ Էջմիածնում[10]: Սակայն կաթողիկոսական Աթոռը կտակելու մասին ոչ մի խոսք չի եղել:

Չնայած դրան, Գրիգոր Աղքիրմանցին Թիֆլիսում լուրեր է տարածում, թե իբր Հովսեփ Արղությանը կաթողիկոսական Աթոռը կտակել է կամ Դավիթ արքեպիսկոպոսին, կամ էլ Կ. Պոլսի նորընտիր պատրիարք Հովհաննեսին[11]:

Թիֆլիսի ռուսական զորքերի հրամանատար գեներալ-մայոր Լազարևը և լիազոր մինիստր Կովալենսկին, Հովսեփ Արղությանին դիմավորելու եկած հրավիրակներին թույլ չտվեցին անմիջապես վերադառնալ Էջմիածին: Դա անհրաժեշտ էր այն բանի համար, որ Էջմիածնում չտեղեկանան դեպքերի մասին և «ինքնագլուխ» ընտրություն չկատարեն:

Հակառակ դավիթականների ապատումներին, գեներալ Լազարևի արգելքներին և Գրիգոր վարդապետի դավերին, հրավիրակների նամակն ավելի շուտ է հասնում Էջմիածին, քան Հովսեփի «կտակի» վերաբերյալ Գրիգոր վարդապետի գրությունը[12]: Կրկին ընտրություն է կատարվում և հաստատվում Դանիելի թեկնածությունը՝ 60 օրվա ընթացքում Էջմիածին գալու պայմանով[13]:

Դրությունը փոխվում է այն ժամանակ, երբ Դավիթն ստանում է Գրիգոր Աղքիրմանցու գրությունը, որը գալիս էր համոզելու, թե հզոր աջակիցներ կան իր թեկնածությունը հաջողացնելու համար[14]:

Ընտրության պահին Դանիելը գտնվում էր Եվդոկիայում (Թոխաթ), և արդեն տեղեկացել էր այդ խառն իրավիճակի մասին: Նա տեղյակ էր, որ Ներսես Աշտարակեցին դիմում է ամեն տեսակ միջոցների այդ գործը գլուխբերելու համար:

Դանիելը Եվդոկիայից 1801 թ. օգոստոսի 1-ին գրություն է ուղարկում Ներսես վարդապետին՝ խնդրելով կաշառքի չդիմել:

— Եթե ազգը ընտրել է Դավթին,— գրում է նա,—թող իր պաշտոնը վայելի: Ես կգամ Դավթի մոտ և կծառայեմ նրան, որպեսզի անտանելի նախատինքը վերանա ազգից և Աթոռից. «քանզի որպէս լսեա՝ կողուպտեալ վատնեալ զբազմահարուստ գոյուն Աթոռոյն միանգամայն, ի ներքոյ ծանր և անվճարելի պարտուց կացուցիք, ձերդ յամառեալ կամապաշտ հակառակութեամբ և սատանայասէր սնափառութեամբ»[15]:

Դանիելը, ստացած տեղեկությունների համաձայն, իր նամակում նույնպես շեշտում է, որ Հովսեփի կաթողիկոսի կտակը Դավթին կամ Հովհաննեսին կաթողիկոս օծելու վերաբերյալ կեղծիք է[16]:

Ներսես Աշտարակեցին հաշվի չառավ Դանիելի ցանկությունը, նրան իր ընտրության մասին տեղյակ պահելու և Էջմիածին ուղեկցելու համար մի պահ անգամ չհապաղեց և մեծ շուքով ճանապարհ ընկավ դեպի Եվդոկիա: Եվդոկիայից Էջմիածին հասնելու համար շքախումբը պետք է անց-

---

[10] Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 10, վավ. № 72, էջ 96:
[11] **Մ. Երամյան,** Ազգապատում, գիրք Բ, Բ հատոր, էջ 3280:
[12] **Լեո,** նշված աշխատություն, էջ 122:
[13] **Օրմանյան Մ.,** Ազգապատում, գիրք Գ, Բ հատոր, էջ 3280:
[14] **Լեո,** նշված աշխատություն, էջ 122:
[15] Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավերագիր № 96:
[16] Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. № 96:

ներ Էրզրումով, ուստի Գրիգոր Աղքիրմանցին վրաց Դավիթ արքայազնի անունից թուրքերեն մի գրություն է ուղարկում Էրզրումի վալի Բաթթալ Հուսեյն փաշային՝ խնդրելով ձերբակալել Դանիելին. նամակում գրված է.

«...Ինչպես լսել և տեղեկացել եք մեծաշուք Հովսեփի կաթողիկոսի կաթողիկոսության հարցի մասին, և այն մասին, որ երկու բարձր պետությունների ցանկությամբ և փառավոր հրամանի համաձայն, Էջմիածնի վանքի կաթողիկոսությանը արժանանալով, նա նշանակվել է կաթողիկոս: Մեզ մոտ մուտք գործելուց հետո, ճակատագրի բերումով, նորին վսեմություն կաթողիկոսը ինն օր անկողնային հիվանդությունից հետո, 10-րդ օրը կատարյալ գիտակցությամբ կտակ անելով՝ այս անցավոր աշխարհը լքեց և շտապեց հանդերձյալ աշխարհը: Հարգարժան Գրիգոր վարդապետին փոխանորդ դարձնելով՝ նա իր փոխարեն նշանակեց Ռուսաստանի հայոց առաջնորդի պաշտոնին, իսկ Էջմիածնի վանքի կաթողիկոսությունը կտակեց հանձնել կամ Դավիթ արքեպիսկոպոսին, կամ էլ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննեսին: Դավիթ արքեպիսկոպոսը, գտնվելով Էջմիածնում, բազմիցս շեշտվել է նրա կաթողիկոսության հարցը: Այս պահին Էջմիածնից որոշ հոգևորականներ երկու վանական են ուղարկել և համառորեն խնդրում են Դանիել արքեպիսկոպոսին Թոխաթից հրավիրել և կաթողիկոս դարձնել: Վերոհիշյալ Դանիել արքեպիսկոպոսը երկու բարձրաշուք պետությունների կողմից մերժվել և աքսորվել է: Խնդրում ենք, երբ որ վերոհիշյալ Դանիել արքեպիսկոպոսը Էրզրում գա՝ ձերբակալել և թույլ չտալ որևէ տեղ գնա»[17]:

Գրիգոր Աղքիրմանցու նպատակն այն էր, որ Դանիելը սահմանված ժամկետում չկարողանա հասնել Էջմիածին:

Բաթթալ Հուսեյն փաշային հղած նամակի վերաբերյալ Գրիգոր Աղքիրմանցին Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոսին մի գրություն է ուղարկում, նշելով, որ իր վաղեմի բարեկամ Բաթթալ Հուսեյն փաշային խնդրել է ձերբակալել Դանիելին[18]:

Դիվան Հայոց պատմության մեջ կարդում ենք. «Գրիգոր վարդապետը Լազրովի ձեռամբն Բաթթալ փաշային մարդ է հղեալ զի ըմբռնեսցէ զԴանիէլ»[19]:

Թիֆլիսից Դավիթ քահանա Տեր-Օհանյանը հայտնում է Դավիթ արքեպիսկոպոսին, որ Դավիթ արքայորդին նամակ է գրել Կարնո Բաթթալ փաշային[20]:

Եվ իրոք, այդ գրությունն ուղարկել է Դավիթ արքայազնը, որի մասին է վկայում ոչ միայն Տեր-Օհանյանը, այլ նաև, նամակի կնիքն ու ստորագրությունը:

Ըստ Գյուտ Աղանյանի, նամակատարն այն ժամանակ է հասնում Էրզրում, երբ Բաթթալ Հուսեյն փաշան արդեն մահացած է լինում[21]:

Դանիել արքեպիսկոպոսը տեղեկանալով այդ խարդավանքի մասին՝

---

17 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 Ը, № 1499:

18 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 41, հմմտ. Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 94:

19 **Գ. Աղանյան,** Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104:

20 Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. № 45;

21 **Գ. Աղանյան,** Դիվան հայոց պատմության, գիրք Ե, էջ 104;

որոշեց շրջանցել Էրզրումը, և Էջմիածին հասնելու համար ընտրել ավելի հեռավոր, սակայն անվտանգ ճանապարհ[22]:

Լեոն, հավանաբար իրազեկ չլինելով այդ դավադրությանը, Դանիելի ուշացումը վերագրում է նրա դանդաղկոտությանն ու անվճռականությանը, նշելով, որ իբրև դանդաղկոտ և թույլ մարդ՝ նա (Դանիելը) չշտապեց գընալ Էջմիածին, այլ ճանապարհվելով Թոխաթից, կանգ էր առնում ամեն տեղ, ուր գտնում էր հյուրասիրություն, որի պատճառով չափազանց երկարացնում էր ճանապարհը[23]:

Բաթթալ Հուսեյն փաշային գրած նամակում խտացված կերպով շարադրված է վերը նշված դեպքերի մանրամասն նկարագրությունը: Նամակից տեղեկանում ենք այն խառնաշփոթ իրավիճակի մասին, որը տիրում է Ղուկաս Կարնեցու մահվանից հետո: Սակայն այս նամակը եզակի չէ: Կան թուրքերեն և պարսկերեն բազմաթիվ վավերագրեր՝ ֆերմաններ, հոքմեր, համախոսական դիմումներ և այլ բնույթի դիվանական և ոչ պաշտոնական գրություններ, որոնք կարոտ են առավել բազմակողմանի ուսումնասիրության:

---

[22] Նույն տեղում:

[23] **Լեո**, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1984 թ., էջ 126: